Հավելված
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների կոմիտեի
2019 թվականի մայիսի 20-ի N33 արձանագրության

_____ Մ. Աբրահամյան

ԱյԴի Բանկի հաշվարկային տոկոսադրույք (ԱԲՀՏ)

Ուժի մեջ է մտնում 01/07/2019թ"

Արժույթ	ԱԲՀՏ	Ուժի մեջ է մինչև
ՀՀ դրամ	10.1%	31.12.2019
ԱՄՆ դոլար	4.9%	31.12.2019

1. **ԱԲՀՏ-ի հաշվարկման կարգը և բաղադրիչները ըստ արժույթների**

1.1. ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի համար հաշվարկվող **ԱԲՀՏ՝**

ԱԲՀՏ = ՄԿՏ

Որտեղ՝

- **ՄԿՏ** – ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:
  «ՄԿՏ» հրապարակվում է Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջի **«Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում** (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

2. **ԱԲՀՏ-ի սահմանումը և կիրառումը**

2.1. ԱԲՀՏ-ն Բանկի կողմից սահմանվում է տարեկան երկու անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ հիմք ընդունելով տվյալ ամսվան նախորդող ամսվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված ցուցանիշը:

2.2. ՀՀ կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված «մեկ տարուց ավելի» ժամկետով ավանդների միջին կշռված տոկոսադրույքը չհրապարակելու դեպքում ԱԲՀՏ հաշվարկ կկատարվի հետևյալ կերպ.

ԱԲՀՏ = ՄԹՏ

Որտեղ՝

ՄԹՏ – ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված «366 օր ժամկետով», «առանց ավելացման իրավունքով» և «տոկոսագումարները ժամկետի վերջում վճարման պայմանով» ժամկետային ավանդների միջին թվաբանական մեծությունն է համապատասխան արժույթի համար՝ կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ :

2.3. ԱԲՀՏ-ն փոփոխվում է այն դեպքում, եթե ՄԿՏ-ն նախորդ ԱԲՀՏ հրապարակած ցուցանիշի հիմքում դրված ՄԿՏ համեմատ փոփոխվել է 1% և ավելի տոկոսային կետով՝ ՀՀ դրամի համար ու 0.5% և ավելի տոկոսային կետով՝ ԱՄՆ դոլարի համար:

2.4. ԱԲՀՏ-ն հաստատվում է Ն(ԱՊ) կոմիտեի կողմից՝ ՄՊՄՎ ներկայացմամբ յուրաքանչյուր կիսամյակի համար: